


ՃԱՆՍՊԱՐԶՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ՉՈՒԼՖԱՅԻՑ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐՈՒՄ ԴԷՊԻ ԴԱՐԱՇԱՄԲ

Բ

Արեգակը արդէն մայր էր մտել եւ մութը տիրապետել ամեն կողմ, երբ հասայ կորաքամակ, զառիւլայր բլրակին, որի միւս կողմին, փռուած Արաքսի ափին մի գիւղ երեւաց: Իմ ուրախութիւնը սաստկացաւ. դա առաջին գիւղն է, որ սահմանագիծ Ձուլֆայից յետոյ առաջին անգամ հանդիպում է ինձ ճանապարհորդութեան մէջ օտար երկրում — Պարսկաստանում: Արդեօ՞ք հայեր են բնակւում այդ գիւղում, թէ՛ պարսիկներ. ինձ լաւ հիւրասիրութիւն ցոյց կը տա՞ն, թէ՛ ոչ, — ահա թէ ինչ անցաւ մտքովս: Այնտեղ, ըստ երեւոյթին, դատարկութիւն եւ հանդարտութիւն էր տիրում. կարծես կենդանի մարդիկ չըլինէին ապրած. ոչ ձայն էր լսւում, ոչ շների հաջիւն: Ճրագների եւ կանթեղների առկայծող աղօտ լոյսի տակ աչքիս ոչ թէ աներ եւ շինութիւններ էին երեւում, այլ կարծես քարեր եւ միմիայն քարերի դիզացած կոյտեր... Ես սկսեցի բլրակից իջնել ցած նեղլիկ կածանով դէպի այդ անյայտ գիւղը, որին սկզբում նախավկայի վանքը կարծեցի, բայց այդ սխալ թիւրիմացութիւնը փութով անցաւ մի քանի փոքրիկ երեխաների շնորհիւ, որ, տոպրակներ շալկած, վերադառնում էին մենաստանից իմ գնացած կածանով դէպի գիւղ: Նրանց խօսակցութեան ձայնը յանկարծ կանգնեցրեց ինձ, նայեցի յետ՝ ի՞նչ նկատեմ — գիւղական չորս փոքրիկներ, հասակով ծից մինչեւ 12 տարեկան, հետը հետէ առաջանալով դէպի ինձ՝ այնքան լարուած ու շաղրութեամբ զբաղուած էին մանկական անմեղ խօսակցութիւններով եւ զրոյցներով, որ բոլորովին մօտեցել էին ինձ, բայց դեռ չէին նկատել: Ես որքան հետաքրքրուեցայ, չը կարողացայ իմանալ թէ այդ երեխաները ի՞նչ լեզուով էին խօսում: Չը համբերեցի, ձայնեցի նրանց — «Գիշերով ու՞ր էք գնում»: Այս ասելն էր, որ՝ ձայնիս վրայ կարծես յից արթնացած, ընդհատելով իսկոյն խօսակցութիւնը, թողին տոպրակները եւ ցրաից վախեցած ճանճի պէս, ինձ պարսիկ աւազակի տեղ ընդունելով, չո՛ւ անելով յետ-յետ փախտն դէպի վանքը տանող մի ձորակի բարձր ու ցածր ելեւէջների ուղղութեամբ: — «Մի փախչէք, փոքրիկներ, կանգնեցէք, մի վախենաք, եկէ՛ք ինձ մօտ, ձեզ բան պիտի ասեմ...» շարունակ կանչում, բղաւում էի նրանց յետեւից: Եւ, արդարեւ, չը գիտեմ ի՞նչ մտածեցին, կանգնեցին նրանք: Ես մօտեցայ համեստաբար՝ աշխատե-

լով չվախեցնել խեղճերին եւ նրանց սրտում որ եւ է կասկած չը յարու-  
ցանել : — «Ի՞նչ երեխայք էք , ինչո՞ւ էք փախչում» , — սկսեցի հարցը-  
նել՝ շոյելով ձեռքով նրանց գլխի վրա գանգրիկ մազերը : Ուրախացայ ,  
փառք տուի Աստուծուն , որ հայի զաւակներ են , ու բնին երեւացող գիւղն  
էլ հայաբնակ կը լինի , — ենթադրելով մտածեցի ես : Ուզում էի նը-  
րանց յանկարծակի գրկե՛լ , գրկե՛լ շատ երկա՛ր , համբուրել նրանց  
կիսապարտկական տարազի շորերի քղանցքները եւ թափել օտար հողի  
վրա , պանդխտական երկրում , բերկրութեանս արտասուքի առաջին կա-  
թիլները . . . Սիրտս ստէպ ստէպ արոփում էր անսահման սիրուց , մի ան-  
բացատրելի ուրախութիւնից : Միեւնոյն ժամանակ տարակուսել էի , չը  
գիտէի ինչ հարցնէի հայ երեխաներին : — «Ո՞վքեր էք դուք» , — կրկին հարց  
առաջարկեցի : — «Մենք հայ երեխաներ ենք , ա՛յ հրէն էն գեղիցը» ,  
ասեցին նրանք՝ մատով ցոյց սալով Արաքսի մօտիկ ափին իմ տեսածս  
գիւղը : Այնպէս կարծեցինք , պարսիկ աւազակ կը լինի թագկացած ,  
կը գայ կը թալանի մեզ ու կը սպանի , դրա համար էլ մենք փախանք . . .»  
Խեղճ երեխաներ , հոգիս դուրս գա՛յ ձեզ համար , ինչպէս երեւում է ,  
վախը ձեզ վրա էլ է ազդել , ձեր սրտում տարրացել , բուն դրել . . . . .  
Առժամանակեայ ուրախութիւնս ախրութեան փոխած՝ հարց տուի երե-  
խաներին . — «Ձեր գիւղում ուսումնարան կա՞յ , ո՞վ է ձեզ կրթողը ,  
ուսում , գիր գիտէ՞ք» : — «Ո՛չ , չը գիտենք . ո՛չ ուսումնարան ունենք  
եւ ո՛չ վարժապետ» : Կարծես այդ անփոյթ պատասխանը մզրախ դարձաւ ,  
սիրտս ծակծկեց : — «Իսկ ո՞վ է ձեր քարոզիչը , ձեր քահանան» : — «Մենք  
քարոզիչ չունենք , ամենեւին քահանայի երես չենք տեսել» : — «Հապա  
ի՞նչպէս են կառավարվում ձեր գիւղացիք առանց քահանայի . եկեղեցի  
ունէ՞ք» : — «Ո՛չ , նա հին էր , փլուել է այժմ , անասունների համար  
«գոմանոց» է ծառայում» : — «Ի՞նչ էք ասում , աղայք , ի՞նչպէս թէ «գո-  
մանոց» . Աստուծոյ տունը ո՞վ է տեսել , որ անասուններին «գոմանոց»  
լինի» : — «Թէ որ չես հաւատում , ա՛յ գնանք , աչքով տե՛ս : Թէ որ սուս  
ասելիս լինինք , քեզ խաբելիս , էն վախտը մեր ականջներից ձգի ու  
մի լաւ թակի . . .» Ներքին յուզմունքս մի կերպ հազիւ զսպելով՝ դար-  
ձայ կրկին երեխաներին՝ հարցնելով . — «Հաւատում եմ ձեզ . ի՞նչ է ձեր  
գիւղի անունը» : — «Դարաշամբ» : — «Դարաշամբ» — կրկնեցի ես՝ առա-  
ջին անգամ լսած լինելով : — «Այո՛ , Դարաշամբ» : — «Շատ լաւ , հա-  
պա ո՞րտեղ է Նախավկայի վանքը» : — «Գիտեն՛ք մեր վանքն ես հար-  
ցնում . նա շատ հեռու չէ մեր գիւղից . երկու վերստ . մեր դալը հիմա  
էնտեղից է» : Նրանք ցոյց տուին աջակողմեան մի բարձր սար . — «Ահա՛  
էն սարի տակն է վանքը , ձորում — ծառաստանի մէջ» : — «Ի՞նչ էիք շի-  
նում վանքում , ո՞վ կար այնտեղ» : — «Մենք գնացել էինք վարունկ  
քաղելու , ահա տոպրակները լիքը տանում ենք մեր ծնողներին : Մենք  
որ գնացինք վանքը՝ ծառաներն էին . Սարգիսը գնացել էր Ջուլֆա՛ շայ

(Թէյ) , շաքար , միս բերելու , որովհետեւ վանքում ուտելու բան չէր ճարվում , միշտ կաթն ու մածուն ուտելուց բէչարել էին թէ ծառաները եւ թէ Սարգիսը» : — «Կաթն ու մածուն , ի՛նչ վատ բան . . . » Դեռ խօսքս չաւարտած՝ փոքրիկներին մէկ ճարպիկը հանեց տոպրակից մի վարունկ եւ մեկնեց գէպի ինձ : Ես հիացայ : Այս ժամանակին հասած վարունկ : Ռուսաստանի վարունկի նման չէր , այլ ուրիշ տեսք , ուրիշ համ ունէր : Ես ուտելով պահանջեցի նորը : Իւրաքանչիւրը իր տոպրակից բաժին հանեց ինձ : — «Ո՞ւմ տղերքն էք» , մէկ-մէկ հարցրի ես : — «Ես Թորոս աղագօր տղէն եմ , ես Մարուքի , ես Մարգարի , ես Մանուկի» , լսուեց պատասխանները կարկառի պէս իրար յետեւից : — «Լա՛ւ , ասեցէ՛ք , ո՞րդ կարող էք միջնորդել ձեր ծնողներին , որ այս գիշեր տանը ինձ հիւր ընդունեն» : — «Ե՛ս , ե՛ս , չէ՛ ես , հազիր ե՛ս . . . ոչ դու , ոչ նա , ե՛ս» , — ասեց ամենից փոքրը եւ լացակունեց : Չեռքիս մէջ առայ վերջինին եւ համբուրեցի նրա անմեղութեան հաճար : Այսպէս երեխաների մէջ սկսեց մի փոքրիկ վէճ մանկական ամենայն պարզութեամբ : Մենք զբաղուած զրոյցով՝ չէինք նկատում բնութեան գործը . գիշերուայ տեսարանը փոխուեց , փարատուեց մթան մռայլութիւնը , կամաց-կամաց աստղերն սկսեցին ցոլալ , պլպլալ երկնակամարի վրա : Ահա լուսինը ճքճքում է մեր գլխի վերեւ—հորիզոնում : Լուսաւորում է սա՛ր , ձո՛ր , Արա՛քս , ջրե՛ր , ալիքնե՛ր . փըչում է լեռնային զեփիւռ , շոյում մեղմիկ մեր ճակատ : Ի՛նչ գարնանային մայիսեան պա՛րզ եւ լուսնկա՛յ գիշեր . . . .

Գ.

Չառիվայր բլրակի բարձրութիւնից իջնելով ես ուղեւորուեցի փոքրիկներին հետ գէպի Դարաշամբ : Ճանապարհին դեռ շարունակվում էր երեխաների վէճը : — «Ասա՛ , մեզնից ո՞ւմ մօտ ես գիշերը «ղօնաղ» մնալու» : — «Ի՛նչպէս կը պատահի» : — «Չէ՛ , պէտք է ասես՝ ամենից առաջ ո՞ւմ մօտ կ'իջեւանես» : Երեխաներից որը լաց էր լինում , որը խնդրում , որը աղաչում , իսկ ամենափոքրը , որի անունն էր Վարդան , կանգնել էր հետու եւ մնացել պաշկած , մի աղերսալի , խղճալի հայեացք էր նետել գէպի ինձ : Ես այդ հայեացքի մէջ շատ բան կարդացի : Նրանք ճանապարհին անդադար կարում էին առաջս եւ շորերիցս կախ ընկնում : Նրանցից ամէն մէկը աշխատում էր հաճոյանալ ինձ , իմ ուշադրութիւնը գրաւել : Աչքերը ձգելով ուղղակի աչքերիս՝ նայում էին բոպէ առ բոպէ գէմքիս միմիկային—նշանացի արտայայտութեան , շարժւածքին եւ անհամբեր հետաքրքրութեամբ սպասում էին լսել իմ վըճուին՝ թէ յօգուտ ո՞րի կողմը պիտի լինէր նսպաստաւոր խօսքը : — «Դէ՛ , ասա՛ , է՛ , մեզնից ո՛րին ես շատ սիրում , որի՛ մօտ ես ուղում հիւր

մնալ» , նորեցին հարցը : Դա այնպիսի մի հարց է , փոքրիկներն կողմից ինձ առաջարկուած , որ ուղղակի չէր կարելի կանխակալութեամբ շուտով , առանց մտածելու՝ պատասխան տալ : Չուղեւով , ի հարկէ վերաւորել մէկի կամ միւսի ինքնասիրութեան զգացմունքը եւ կամենալով միանգամայն փակել անմեղ շարունակուող վէճը , մանաւանդ որ արդէն մօտեցել էինք դիւղին , ես հանդարտեցրի՝ ասելով . — «Նս ամենեւին ցանկութիւն չունեմ մէկն ու մէկիդ սիրար կոտորել եւ խաթրին դիպչել . այս դիշեր ձեր ամենի տանն էլ «ղօնաղ» կը լինիմ . . . » Բայց տեսնելով վէճը աւելի է բորբոքվում եւ իմ պատճառով փոքրիկներն մէջ կռիւ ծագում , սկսեցի աւելի կտրուկ , համոզելու համար ամենայարմար միջոց մտածել : Եւ այդ միջոցը , վէճին վերջ դնելու մտքով , առաջարկեցի նրանց այսպէս . — «Մի կռուէ՛ք , սիրելիներ , եկէք վիճակ ձգենք , վիճակն ունի ընդինի . թող նրա խնդիրքը կատարուած լինի : Համաձայն է՞ք» : — «Հա՛ , համաձայն ենք» , միտքերան աղաղակեցին երեխաները : — «Միայն այն պայմանով , — ասեցի ես , — որ վիճակը վերջանալուց յետոյ կսիւ չը լինի : Պէտք է մէկը միւսի բողոքին չը նախանձի : Դուք մի ազդի զուտակներ էք , մի գիւղում ծնուած ու սրնուած հայրենակիցներ , շրջանի ծանօթ ընկերներ , արեան մերձաւորներ . . . լաւ չէ , որ ձեր մէջ լինի վէճ , այն էլ ներկայութեամբ մի օտար երկրացու , որ առաջին անգամն է գալիս Պարսկաստան՝ ձեր գիւղը . . . » երեխաներից ամենափոքրը — Վարդանը գնաց իբր խռով . որպէս զի վիճակախաղի ընտրութեան որոշմունքը չը նկատի՝ պատուիրեցինք նրան երեսը շրջել մեր կեցած տեղից դէպի հակառակ՝ արեւելեան կողմը : Ես վերցրի մի վարունկ , մի ծաղիկ , մի չովի եւ մի քար : Առաջարկեցի իւրաքանչիւրը տէր լինել որ եւ է մէկին : Այդ առաջարկութիւնը եղաւ Վարդանից ծածուկ . նրա ականջը չը պիտի լսէր ոչ ինչ բան եղելութեան մասին : Նաեւ ծածուկ կերպով ծաղիկ ընտրողը ես եղայ Վարդանի փոխարէն : Ապա խռով տեղից կանչեցինք վերջինին եւ առաջարկեցինք ջոկած առարկաներից ծեղ—վիճակ ընդունել իրանց երեխաների չորսի մէջ : Վիճակին (1) համաձայնական խորհրդով սկզբից տուել

(1) Ռուսաստանում տեղական հայ երեխաների մէջ միմեկու օրս էլ սովորութիւն կայ որ եւ է բան բաժանելիս ծեղ գցել , այնպէս որ ամենքն էլ իրանց ընտրած եւ ընկած ծեղի համեմատ ստանում են բաժինը : Նոյնը պատահում է երբեմն ե՛ւ կալուածական խնդիրներում : Օրինակ՝ երբ եղբայր-եղբայր բաժանվում են միմիանցից եւ կիսում իրար մէջ ունեցած թէ շարժական եւ թէ անշարժ կայքը—գոյքը , բայց համաձայնութիւն չէ կայանում նրանց մէջ ընտրած մասերի որ եւ եւ անհաւասարուրեան պատճառով , սկսում են ծեղ գցել եւ այդպիսով վերջ դնել տեղի ունենալիք անախորժ գէպքերին . . . Վիճակը լինում է ե՛ւ մի ուրիշ տեսակի «քար-պահելու» ձեւով : Երեխաներից մէկը տանում է ձեռքերը յետեւի կողմը եւ ամենքից անյայտ՝ գաղտնի կերպով նրանցից մէկում բռնում քար , միւսը թողնում փռչ : Ապա մեկնում է առաջ եւ

էինք այն հեշտ ձեւը , որ Վարդանը պէտք է առաջին անգամ յիշեալ առարկաներից միմիայն մէկը վերցնէր , որը ցանկանար . վերցրուածի պատկանեալ կողմը կը լինէր յաջողութիւնը : Նա վերցրեց . « ծաղիկը » — « Ո՞ւմն է սա » , — իսկոյն գոռաց նա : — « Քոնն է , — պատասխանեցի ես , — ուրեմն ձեր սանը « զօնաղ » կը լինեմ այս գիշեր » : Վարդանը ուրախութիւնից թռչկոտաց անմեղ գառնուկի պէս ու երգեց . . .

« Քո ձէնին մեռնի՛մ , բալա՛յ ջան » , յանկարծ գիւղի ծայրից լսուեց ծեր Մանուկի ձայնը : Որդու ձայնի վրա նա ուրախ-ուրախ առաջացաւ դէպի մեզ : Վարդանը իսկոյն վազեց , ընկաւ հօր գիրկը : Հայրը ամուր գրկեց փոքրիկին ու համբուրեց . — « Էսքան ուշանալ կը լինի՞ , որդի , մայրդ մտածելուց հիմա գիծուել է , աչքերն իս՛ ճամբէդ պահելով՝ ջուր կտրուեց . . . » — « Ամի՛ , — անդադար համբուրելով ու փաթաթուելով հօր վզով՝ ասու՛մ էր վարդանը , — Աստուած մեզ համար մի « զօնաղ » է ուղարկել , դրա համար էլ ուշացանք . . . » — « Ի՞նչ-զօնաղ » , — հարցրեց ծերունին՝ յենուած ձեռնափայտի վրա , գողգոջուն ձայնով : Ծերունու սպիտակ մօրուքը մինչեւ ծնկներն էր հասնում եւ կարծես յայտնում էր նրա 70 տարեկան լինելը : — « Մի օտարական հայ » , պատասխանեց Վարդանը : — « Բա՛ ինչո՞ւ , որդիք , նրան էլ չը բերիք ձեզ հետ . . . » , ասաց ծերունին անկեղծաբար՝ աչքերը հետաքրքիր կերպով շարունակ շրջաշրջելով դէս ու դէն՝ կարծես փնտսելու օտարական հային . . . Նս այդ միջոցին մօտեցայ ծերունուն , խոնարհութեամբ ձեռքը սեղմեցի՝ բարեւելով . — « Ահա՛ օտար որդիդ կանգնած է քո առաջ » : — « Շատ ապրիս , ո՛րդի , բա՛րով ես եկել՝ դու հազար բարո՛ւլ , մի՛ ամաչի , զօնաղն Աստուանն ա . հալբաթ սրանում Աստուծոյ մատը խառնն ա , որ դու զօնաղ ես եկել մեզ մօտ » : Ապա ծերունին ձեռքը գրկխիս դրեց եւ Յակոբին տուած Իսահակայ օրհնութիւնը թափեց վրաս՝ դանազան գրոյցներով համեմատ : — « Դէ՛ պատրաստուեցէք , գնանք տուն , ժամանակն անցնում է , էնտեղ շատ բաներ կը խօսենք » , ասեց ծերունին եւ առաջ ընկաւ : Նա փոխում էր քայլերը շատ թեթեւ , գընում էր այնպէս , որ հէնց իմանաս քսան տարեկան ժիր եւ աշխոյժ երիտասարդ լինէր : Մենք հազիւ էինք կարողանում հետեւել նրա օտքերի գնացքին , երեւի , ճանապարհի յոգնութիւնից : Փոքրիկները , մինչեւ տուն հասնելը , սկսեցին ծերունուն պատմել եղելութիւնը մի առ մի , թէ ինչպէս զառիւլայր բլրակի վրայ ինձ առաջին անգամ հանդիպած ժամանակ՝ աւազակ կարծելով՝ չո՛ւ են արել , կրկին փախել

գիւմացիներն առաջարկում խփել այս կամ այն ձեռքին : Եթէ փուչ է դուրս գալիս՝ խփողը ազատվում է : Նոյն առաջարկութեան գիւմումը լինում է մնացեալ միւսներին եւս յաջորդաբար , հերթով : Խաղը շարունակվում է այսպէս՝ մինչեւ որ քարը վերջը մնում է մէկին՝ քանելի եւ աշխոյժ խաղը , եւ վերջինի վրա ծանրանում նախածրագրած եւ պայմանաորոշ պարտականութեան կատարելը . . .

լեղապատառ յետ , դէպի վանքի կողմը , թէ ինչպէս ձայնի վրա ձա-  
նաչելով որ տեսածը աւագակ չէ , այլ մի օտարական հայ , կրկին վե-  
րագարծել են , հանդարտուել , վերջապէս թէ ինչպէս վէճ է բացուել  
եւ վիճակ է ձգուել իրանց մէջ օտարական հային հիւրասիրելու համար  
եւ այլն : — «Այդ բոլորը ես լսել եմ ականջով , — ասաց ծերունին , — հե-  
ռուից թագնուած ժամէ ժամ լսում էի ձեր խօսակցութիւնը , ձեր ման-  
կական վէճը , վիճակախաղը եւ քաղցր երգերը» . . . Այնուամենայնիւ  
ծերունին մեծ պատրաստականութեամբ , հետաքրքիր ունկնդրութեամբ  
լսում էր փոքրիկներին բերանէ բերան պատմածներին , կարծես կամե-  
նալով աւելի ստոյգն իմանալ : Նա շարունակ գլուխը՝ դրա հետ մէկտեղ  
եւ ալեւոր մօրուքը տմբամբացնում էր , իբր հաւանականութեան նշան ,  
եւ մտքումը ժպտում էր . . . Կէս-գիշերով մտանք Դարաշամբ (1) : Գիւ-  
ղում տիրում էր լռութիւն : Բնակիչները քնած էին : Տեղ-տեղ աների  
երգիքներից երեւում էր դեռ չհանգցրած ճրագների լոյսը : Մենք ան-  
ցանք գիւղի ծուռ ու մուռ , ոլոր - մոլոր , նեղլիկ փողոցներով ,  
կանգ առանք ձեր Մանուկի տան առաջ : Սա գտնվում էր գիւղի կեն-  
տրօնում : Այս տունը աւելի մեծ յարգանք եւ անուն ունի միւս անե-  
րից , որովհետեւ այստեղ աւելի շատ են իջնում հիւրերը , ծանօթ եւ  
անծանօթ : Երբ ես ներս մտայ հիւրընկալութեան դահլիճը , թէ կարե-  
լի է այսպէս անուանել , աչքովս ընկան թախտի վրա շարէ շար պառ-  
կոտած անկողիններում փաթաթուած եւ վերմակի աակից երեւացող մի  
քանի գլուխներ : Ծեր Մանուկի գերդաստանի անդամները կազմում էին  
դրանք , որ «տան սիւնը» կազմող մեծի ուշանալու պատճառով , ճրա-  
գը հանգցրել պառկել էին խոր քնի մէջ : Ես անպատշաճ համարեցի եւ-  
կար մնալ այնտեղ՝ չկամենալով խանդարել նրանց գիշերային անդոր-  
րական քունը , դուրս եկայ դահլիճից — ի՛նչ դահլիճ , ի՛նչ տուն , ի՛նչ  
բան , — ճիշտ Ջուլֆայում տեսած խրճիթի նման մի խաւար գետնա-  
փոր , եւ դժուար այդ գիւղում գուք կարողանաք գտնել որ եւ է բնա-  
կարան , որ բարձր պատերով բարձրացած լինի գետնի մակերեւոյթից  
եւ պատերի միջից բացուած լինին յարմարաւոր պատուհաններ՝ ներս  
ընդունելու օդ եւ լոյս : Ինչպէս նկատեցի , առհասարակ Դարաշամբ  
գիւղի տան շինութիւնները արտաքուստ ներկայացնում են իբրեւ քա-  
րակոյտային բլրակներ եւ կարծես խլուրդների ստորերկրեայ որջեր լի-  
նին այստեղ-այնտեղ փորփորած : Վա՛յ կառքերին , որ սակայն , մուտք  
չունին ամենեւին այս արշիպեղապոսի լաբիւրինթոսների մէջ : Տը-

(1) Այս գիւղի մասին , նաեւ Նախավկայում տեղի ունեցած աւա-  
զակների յարձակման դէպքը , իր ժամանակին գրել եմ «Ճանապարհորդ»  
ստորագրութեամբ համառօտ «Նոր-Դար»ում , (տե՛ս թ. 141) : Այդտեղից  
ես կաշխատեմ օգտուել մի քանի բարեփոխութիւններով , քաղուած օ-  
րէն՝ նիւթի ամբողջութիւնը պահպանելու նպատակով :

ները շինուած են այնքան իրար մօտ եւ խառնիխուռն, որ մարդ դժուարա-  
նում է հարեւանի մի կտուրը որոշել միւսից : Եթէ խրտնած կամ մուռ-  
րուած անասուն ուղղակի բարձրանայ կտուրը՝ իսկոյն տանիքը փուլ  
կըգայ՝ թողնելով տակը միջի ապրող անձար եւ դժբաղդ բնակիչներին :  
Գետնափոր, անկանոն խրճիթների այսպիսի դիրքը մանաւանդ վտան-  
գաւոր է չարածճի երեխաների համար, որ տանիքների վրա խաղալով  
միամտութեամբ երբեմն ընկնում են երդից կամ բուխարից տան ներսը  
գլխովայր եւ չարաչար մնասվում . . . Այսպիսի աղետալի երեւոյթներ սո-  
վորական բան է դարձել դարաշամբցիների համար :

Ծեր Մանուկի տանը ճրագներ վառուեցին : Ինձանից յետոյ, նա  
ձեռնափայտով մէկ-մէկ քնից զարթեցրեց հարսներին եւ պատուիրեց ըն-  
թրիք պատրաստել : Խրճիթի ներսում փշփշոց էի լսում—«Նարաբ, եկողը  
ո՞վ ա, ի՞նչ մարդ ա» : Դուրսը, գաւթում ազատ սդ էի ծծում՝ խոհերս  
դարձրած ասողազարդ երկինքը : Գիշերուայ քամին խրճիթում վզվզում  
էր պատի մի կողմը փլած քարերի արանքից եւ դուռը ճրո-ճրո բաց ու  
խուփ անելով ուժգնութեամբ, հոտանքով խփում էր երեսիս : — «Ի՞նչ  
եղաւ, ո՞ւր գնաց օտարական հայր, Աստուծոյ դօնաղը», — հարցրեց  
հարսներին Մանուկը եւ դուրս գալով խրճիթից ձայնեց . — «Ներս համե-  
ցէ՛ք» : Դեռ տուն չըմտած՝ հարցրի Մանուկին . — «Ինչո՞ւ ձեր խրճիթնե-  
րը այսչափ խեղճ են, ինչո՞ւ դուք էլ մարդավարի չէք ապրում» :  
Սպասած հարցիս հակառակ պատասխան առայ Մանուկից . — «Մեզ ի՞նչ  
հարկաւոր են այն տեսակ տներ, որ թաւրիղի, Խօյի եւ Սալմաստի  
հարուստներն ունին . մենք այսպէս ապրելուն սովոր ենք . . . » Ի՞նչ ասէ  
խեղճ հայր, մի կերպ համակերպած է իր վիճակին . անտարակոյս պար-  
սիկ մահմետականութեան տխուր ազդեցութեան հեռեւանքն էք դուք,  
ո՞վ ճակատագրային թմրութիւն, մեռելութիւն եւ անշարժութիւն :  
Ցաւալի է նկատել, որ պարսից իշխող ձեռքը, նրա բռնակալութեան  
կամայական տիրապետութիւնը, աւա՛ղ, շատ են փոխել Պարսկահայ  
ժողովրդեան բնաւորութիւնը : Մինչ օտար ժողովուրդ կը սկսի բարեկե-  
ցիկ կեանք վարել, հողեր ընդարձակել, արտեր, այգիներ մշակել՝  
հայր իր բնիկ հողի վրա խեղճութեան եւ չքաւորութեան մէջ կը մաշէ  
իր սիրտը, իր հոգին . . . Մարդու սիրտը մորմօքում է եւ հոգին վըշ-  
տանում, երբ տեսնում է հայի գիւղը գետնափոր, անշուք խրճիթնե-  
րից, որջերից բաղկացած, որոնց ծխնելոյզներից եթէ աթարի ծուխը  
իր կապուտակ գոյնով չը բարցրանայ դէպի վեր, ամենեւին կարծելու  
առիթ չըպիտի լինի թէ այնտեղ մարդկային շունչ, մարդկային շինու-  
թիւն կայ : Ի՞նչ է Դարաշամբը, ազատութի՛ւն, խեղճութի՛ւն ամեն  
կողմ, — ուրիշ ոչինչ . . . «Համեցէ՛ք, ընթրենք», — ասեց Մանուկը  
եւ թեւիցս բռնած գիմաւորեց ինձ խրճիթի ներսը, դէպի գորգապատ  
թախտի բազմոցի կողմը : Նստած ընթրում էինք ես, Մանուկը եւ իր

փոքրիկ զաւակները , իսկ տան հարսները ըստ իր օջախի բուխարի շուրջը՝ կանգնել էին եւ մերթ աչքի տակով զննողական հայեացքներ էին դրում դէպի ինձ՝ իբրեւ անճանաչ եւ անծանօթ օտարական անձնաւորութեան վրա : Այդ գեղեցիկ սեռի , ինչպէս եւ ամբողջ Դարաշամբի կանանց զգեստների մէջ նմանութիւն դասայ Գողթնացոց եւ Ջուղայեցոց զգեստներին : Թուեց համառօտ նրանց զգեստների տարազը , զարգարանքը , եւն :

Գլխներին ծածկում են սպիտակ ջասրայ (1) , որը երբեմն ծառայում է նաեւ հովանոցի տեղ , երբ անձրեւային է լինում եղանակը : Այդ ժամանակ կանայք հովանոցի նման սպարզում են այդ ջասրան եւ թրջուելուց պաշտպանվում : Չասրայի ներքեւ երեւում է արծաթեայ ջանգարով ջարդարը , որ փաթաթում են վզերին խառանածեւ : Ճակատներին կրում են նրկանոցը՝ պճնազարդուած շար ի շար ոսկով , կա՛մ արծաթով , կա՛մ արծաթէ հին արժէքի զալթուհանոց եւ արասանոց փողերով : Այսերի բարձրերի երկու կողմը , աջ եւ ձախ , ականջների բաց առաջին կողերին՝ ջասրայի եւ ջարդարի ծայրերն իրար մէջ ամրացրած են կապերով , ֆիւլիւլներով կամ գնեսակներով : Թեւքերի վրա լայն քեզանիք՝ հիւլուհ , սարուայ , դիւզուայ կամ կոնակ , ըստ ինչ էլ ոսկի , արծաթ , բիւզմանդ եւ կամ հասարակ վարչաւ , եթէ կինը չքաւոր ընտանիքից է , ըստ ինչ էլ անանի : Ծնօտները ծածկուած են չրնասպասով՝ ճոթի որ եւ է յարմարաւոր տեսակով , իսկ քիթը , բերանները ֆրնկկարներով՝ միշտ սպիտակ գոյնով : Վերջինը նշան է նրանց չրիօսկան լինելուն : Նահապետական հին սովորութեան համաձայն՝ ինչպէս Հայաստանի շատ գաւառներում , նոյնպէս եւ Դարաշամբ գիւղում , կանայք՝ բացի իրանց ամուսնու , զաւակների ու զբացուհիների հետ , չը պէտք է օտար տղամարդու , նոյն իսկ տեղօր կամ սկեսրարի (սկեսուր) մօտ խօսեն , զրուցեն , որովհետեւ մեծի կամ կողմնակիների մօտ խօսելը «անհամեմատութիւն» է : Մինչեւ տան հարսներին բան չը հարցնեն՝ իրաւունք չունին խօսելու : Տան հարսը պարտաւոր է զօնադի մօտ էլ անխօս լինի , ծանր եւ համեստ պահի իրան . ո՛չ մի աւելորդ խօսք կամ ձայն չը պիտի լսուի նրա բերանից , նրա շրթուհներինց առանց որ եւ է հարց առաջարկելու , իսկ հարցրած դէպքում ամօթխած , քաշուած դիւքով կամ երեսը կէս մին հակառակ կողմը շուր տուած՝ պիտի համեստաբար պատասխանի միայն ձեռքի զանազան նշանացի շարժումներով կամ գլխի խորհրդաւոր իշարարներով՝ առանց լեզուի գործածութեան : Հիւ-

(1) Պարսկաստանում առհասարակ պարսիկ կանայք ծածկում են սեւ կամ փաթաթուած կապոյտ սաւանով ու երկունները ինքնակալ քողարկած : Պարսկաստանում կանայք ման են գալիս երեսները ծածկ , նրանց զանազաններու համար պէտք է աչքի առաջ ունենալ ջասրայի գոյնը : Եթէ սպիտակ է՝ կը նշանակի կինը հայ է , եթէ սեւ՝ պարսիկ :

բասիրութեան չափազանցութիւնը եւ մեծերին յարգելը գիւղական-նա-  
հապետական հայ առանին-ընտանեկան կեանքի ամենագլխաւոր յատկա-  
նիշն է : Երբ ընթրիքի ժամանակ Մանուկին հարցրի թէ ինչո՞ւ հարս-  
ները օջախի բուխարի շուրջը բոլորած՝ կանգնած են ոտի , չեն նըս-  
տում , — պատասխանեց . — «Ականջդ կանչի՛ , Խրիմեան Հայրի՛կ , մի  
գիշեր հիւր մնալով այս յարկի տակ , երբ նկատեց խեղճ գիւղական  
հարսների դրութիւն , դու էլ նոյնը հարց տուիր ինձ , թէ «ինչո՞ւ  
հարսներ կը կայնին , չեն նստիր . . . » — Մեր Դարաշամբի հարսներ ,  
—ասեցի , — իրաւունք չունին նստելու , մինչեւ տան մեծը կամք չը-  
տայ ու չը հրամայի . նրանք յետոյ կը նստեն եւ մի՛ այն այն ժամանակ ,  
երբ ծեր թէ հասակաւոր , ծանօթ թէ անծանօթ ներկայ եղող մարդը  
կամ երիտասարդը արդէն նստած կը լինի : Հարսները , ինչպէս որ տան-  
աէր կառավարիչ իշխանը , պիտի լաւ հասկանան , որ գիւղական հայի  
տունը կայարան է եւ միշտ բաց պիտի լինի հիւրի համար : Հարսները  
«ղօնաղ» ասելով պիտի հասկանան , որ Աստուծոյ պարգեւն է , Աստու-  
ծոյ ողորմութիւնը . . . . . ուստի պարտաւորուած հիւրերի առաջ նրանք  
կանգնած , ձեռքերը կրծքերին խաչաձեւ դրած խոնարհութի՛ւն , յար-  
գա՛նք , քաղցր վարեցողութիւն պիտի ցոյց տան միշտ եւ միանգամայն  
հաւեւսուրեան տիպար հանդիսանան՝ առանց շաղկրատելու . որ եւ է  
աւելորդաբանութիւն , առանց դուրս գալու . որոշեալ իրաւունքի սահ-  
մանական որ եւ է կէտից . . . . . Իրաւունքից դուրս եկող հարսներին  
մենք «երես» չենք տայ , չենք պահի տան մէջ : Նշանակում է՝ այդ  
խակ անվայելուչ հարսը մեղանչում է մեր նախահայրերի դոյրանից  
(ժամանակ) սրբութեամբ դեռ մնացած աւանդական սովորութեան , պա-  
տում է համեստութեան եւ ամօթխածութեան փողը , վայր է ձգում  
տան ձեծի պատիւը , օջախի անունը եւ ազնիւ հիւրի առաջ դայթակ-  
ղութեան տիպ ներկայանում : Դարաշամբում չը կայ այդ տեսակին պատ-  
կանող անառակ կին կամ հարս : Այստեղի կանայք , հարսներ եւ աղ-  
ջըկերք ուրիշ արեւելեան ազգերի նման փակուած են տներում , շա-  
տամաչկոտ են , աղատօրէն չեն շրջում գիւղի մէջ եւ թիֆլիզի , մանա-  
ւանդ Հաւլարարի , թեթեւօլիկ կանանց նման չը գիտեն փողոցներում  
արձակ համարձակ ման գալ եւ միմեանց հետ բարձրաձայն փնթփնթալ . .  
Այստեղի կինարմատը շատ աշխատասէր է ու տոկուն . նա շատ լաւ ճա-  
նաչում է իր դորձը , նա ամուսնու հաւատարիմ լծակից ընկերն է ,  
նրա խորհրդակիցը եւ օգնականը՝ ամեն տեղ , ներսը , դուրսը , տա-  
նը , դաշտում , աշխատանքի ժամանակ . . . . — «Կեցցէ՛ Դարաշամբի  
գիւղական կիներ , ամուսնութեան հաւատարիմ , որք բարի մայրեր կը  
լինին եւ գեղեցիկ զաւակունք կը ծնանին : Մեր վանայ կողմերն ալ  
հայ կիներն ու հարսներ շատ պարկեշտ , համեստ կ'երեսին : Երանի՛  
այդ կիներուն , ախո՞ս սակայն ասոնց ուսման բարեկրթութիւն եւ

կանոնաւոր դաստիարակութիւն կը պակսին» : Այդ էր Հայրիկի համառօտ , անպաճոյճ խօսքերը կանանց եւ հարսների մասին այս գիւղական խրճիթի յարկի տակ արտասանած . . . » Հայրիկի անունը լսելով , հետաքրքրութիւնից շարժուած , Մանուկից լսեցի , որ նա , Հայրիկը , գեռ վարդապետ եղած ժամանակ , ծպտեալ շորերի մէջ ծրարուած , մի գիշեր եկել է Տաճկահայաստանի կողմերից Առբը Ստեփաննոս Նախավկայի վանքը եւ գիշերելու ապաստան է խնդրել այնտեղի պորտաբոյժ անարժան վանահայրերից : Վերջինները չը ճանաչելով Հայրիկին՝ ժխտողական պատասխան են տուել , «տեղ չկայ» ասել են եւ փայտերով չարաչար վռնդել : Հայրիկը ճարահատուած դիմել է Գարաշամբ ծեր Մանուկին եւ սրա մօտ սիրով հիւրընկալութիւն դտել : Հետեւեալ օրը գնայլիս գրել է յուշատետրի մէջ հիւրասիրողի ազգ եւ անունը եւ ասել . «Նս Խրիմեան Հայրիկն եմ , ինձի չեն ճանչնար , վանահայրերը Նախավկայում գիշերով տեղ չը տուին ինձ , կերթամ Ռուսաստան , 'ի նկատի կառնեմ քեզի , Մանուկ ախպա՛ր , չեմ մոռնար ամենեւին քո հիւրասիրութեան երախտիք . . . » Հայրիկի հեռանալուց յետոյ՝ վանահայրերը ծեր Մանուկից երբ իմացել են բանի էութիւնը , շատ են ցաւեցել , որ գիշերով չեն հիւրասիրել պանդուխտ հալածականին , այն արժանաւոր հոգեւորականին , որ գիշեր-ցերեկ չէր դադարում աչքերից շարունակ աղի արտասուք կաթեցնել իւր հայրենիքի եւ տառապեալ ազգի խղճուկ վիճակը , ամենավատթար դրութիւնը տեսնելով . . .

Գարաշամբի կանանց մարմնի իրանի վրա քիկնոցաւեգֆուրմ կայ նեղլիկ գօտի — գուշաղ կամ փօղարի շաղ կամ արծաթեայ կամ բեհեզեայ : Զեռքերի երեսին ծածկած աշցակով կամ քեզակիֆով , իսկ ոտներին նախշունիկ եւ խատուտիկ բրդեայ շալ գուշպիֆ , որի գերիշխող գոյնը ընդունուած է առաւելապէս կարմիր : Գուլպաների վրա հագնում են կարմիր շուս կամ սաղրի յօշ՝ տակը նալչած կամ պայտած : Դերխան կամ միկրանան լինում է Շուխիկի , Գարելինի եւ Պակրովի էժանագին մանաւանդ դալամքեարի կոչուած կէս բութաւոր չիթերից . շատերը հագնում են արխաղուխ գարաւոր , ոմանք էլ , շատ քիչ բացառութեամբ , ֆաթիպա : Այնպէս որ կանանց հագուստների մէջ այնքան էլ միակերպութիւն չէ նկատվում , խառնուրդ է Գողթնացոց , Ծուղայեցոց եւ Ղարաբաղի մի մասի — Շուշեցոց զգեստներին : Այս է , ահա՛ , Գարաշամբի հայ կնոջ բոլոր դարդը ու զարդարանքը : Գալով Գարաշամբի տղամարդկանց , պէտք է ասել՝ ընդհանրապէս սրանց հագուստների մէջ դրեթէ միակերպութիւն է նկատվում . հագնում են ոչխարի բրդից տանը պատրաստած «տրփագործ» շալէ չուխայ , մահուղից , մաւի դիմիկիտօնից , կանաչ-սեւ դատաքներից եւ կամ ուրիշ հասարակ կտորներից արխաղուղ , չիթից , կտաւից կամ կարմիր շիւլայից շաքիկ , լայն փոխկով շաղար (անդրավարտիկ) մէջքները կամ բաց կամ քոխկաւոր քամար , գլխներին

ծածկած հասարակ մորթից գդակներ : Օրինաւոր կօշիկ սրանց համար պաս է եւ հազուադիւտ , ոտնամանները *srleksներ* են կամ չարըխներ : Կերած հացի տեսակներն է լաւաշ եւ «բոքոն» կոչուած հասա տաշիկ կոլորիկ հաց : Կերակուրները — զոխ , բոխ , մախոխ , թթու քալամ , ֆըշնալի (փլաւի մի տեսակը՝ եփուած ձիթով կորկոտից , ձաւարից կամ հասարակ բրնձից) չըխրքնայ , դաւուրնայ , կաթ , մածուն , թան , ճոփ , միս եւ ալլն . . . Շարաթը մի եւ հազիւ է պատահում երկու անգամ , որ միս գործ ածեն , այն էլ որսի : Արաքսի եւ Նախավկայի շրջապատող բարձր լեռները լիքն են էրէներով , նապաստակներով , վայրի այծեամներով : Դարաշամբի երիտասարդները միշտ սովորու թեան համաձայն , առաւօտեան դեռ ծէգը չը բացուած , չախմախաւոր թուանքներով բարձրանում են այդ լեռների գագաթները եւ ողջ օրը թափառելով այնտեղերում որս անում . երեկոյեան սպանած կաքաւներով , ջէյրաներով (եղջերու) այծեամներով եւ նապաստակներով վերադառնում են գիւղը այն նապատակով , որ հետեւեալ օրը որսորդական նոյն արշաւանքը սկսեն : Վանքում նոյնպէս աշխարհական Սարգիս վանահայրը եւ ծառաները , բացի սովորական կաթ եւ մածուն կերակուր ունենալուց , ապրում են եւ որսի մսով : Երբեմն , որսի անյաջող ժամանակ , միսը , ինչպէս եւ ուրիշ անհրաժեշտ կենսական մթերքներ , որոնք չեն ճարվում վանքում եւ Դարաշամբում , բերում են Ջուլֆայից : Դարաշամբի բնակիչներն բնդհանուր առմամբ , բացի որսորդական ազատ դրօսավայր պարապմունքը , պարապում են եւ երկրագործութեամբ , երբեմն էլ խաշնարածութեամբ : Նախավկայի արեւմտահարաւային կողմում , Արաքսի ափին , մօտ 2 վերսա հեռաւորութեան վրա է գտնվում Դարաշամբը : Սա վանքապատկան գիւղ է , ունի միայն 21 տուն բնակիչ , որոնք զուտ հայեր են եւ կառավարվում են վանքի հողերով : Դրանք հնու մն եղել են գաղթական ժողովուրդ . Շահ-Արքասի բարբարոսութեան ժամանակ գաղթելով Հին-Ջուղայից՝ եկել են այդտեղ բնակութիւն հաստատել : Պատմում են , որ Դարաշամբը 700 տուն բնակիչ է ունեցել , բայց Շահ-Արքասի աւերումներից մնացել է 21 տուն բնակիչ միայն : Մինչեւ այժմ տեղ-տեղ երեւում են փլատակ հին շինութիւնների հետքեր եւ քարերի ահագին կոյտեր : Ահա՛ թէ ինչու այնչափ խղճուկ են մնացել Դարաշամբցիների խրճիթները , որոնց մասին մի քիչ վերելում ակնարկեցի Մանուկին՝ դեռ ընթրիքի համար հիւրընկալութեան «գահլիճը» չը մտած : Նահապետական հին սովորութիւններ , նախապարապմունքներ , աւանդութիւններ տակաւին տիրում են այդ գիւղում : Դարաշամբի գիւղացիները , բառի բուն նշանակութեամբ , ազէտ են . «այլբ-բէն»-ի հօտն անգամ առած չեն : Ամբողջ գիւղում մի գրագէտ մարդ չես գտնել , բոլորն էլ զուրկ են գրից , ուսումից : Շատ ժամանակից ՚ի վեր քահանայ չունին ամենեւեւին : — «Մի՞ թէ ձեր մէջ կարգացող չկայ» , — հարցրի գիւղացիներին՝

Ծեր Մանուկի հետ հետեւեալ օրը գիւղի մէջ պատելով : — «Մենք ուս-  
հար , ոամիկ մարդիկ ենք , չենք հասկանում ի՞նչ բան է ուսումը ,  
ո՞րտեղից կարդալ իմանանք» : — Մինչեւ ե՞րբ , դուք՝ գիւղացիներ  
դարեւրի ընթացքում քարացած մնաք աւանդական անշարժութեան մէջ ,  
լոյսից եւ գիտակցութիւնից հեռու , վերջապէս ե՞րբ պիտի հասկանաք ,  
որ դուք Աստուծոյ բանական արարածներ էք , ունէք սիրտ , հոգի ,  
խիղճ , զգացմունք , միտք , մտածելու եղանակ , պիտի ջոկնուէք-զա-  
նազանուէք անասուններից եւ չը վարել այսպէս , ուսումից դուրկ ,  
անասնական-բուսական կեանք : Լո՛յս , Լո՛յս է միայն հարկաւոր ձեզ ,  
որ թափանցի ձեր ներքին տգիտութեան մութ աշխարհը եւ այնտեղ  
տիրած թշուառութեան կոպիտ , կարծրացած , յուսահատ եւ պաղած  
սրտերը յղկէ , կոկէ , գեղեցկացնէ եւ նրանց վրա տեղացած մռայլ  
մշուշապատ ամպն ու խաւարը փարատի : Բայց ո՞վ կարող է այդ արգա-  
հատելի , աղաղակող եւ համատարած թշուառութեան կամ տգիտութեան  
առաջն առնել : Նա՛ , որ ընդունում է խղճի ազատ գաղափարը , հասա-  
րակական կեանքի իտէալը , նա՛ , որ անձնուրաց է համաշխարհային  
երջանկութիւնը զոհարերող , որ համարում է իր գոյութիւնը որպէս  
գրաւական ժողովրդի , առաջադիմութեան գործի , փրկանք եւ օգնու-  
թիւն շատերի-ընդհանրութեան շահերի , կարիքների եւ պահանջների՝  
անխուսափելի դժբաղդութեան մօմենտներում , նա՛ , որ կատարելա-  
պէս ըմբռնում է այն միտքը թէ «մէկը չատի համար» , — ահա՛ թէ ո՞վ  
պիտի մօնէ գիւղական խուլ անկիւնը , այդ մութ անջրպետ վայրը ,  
որ լուսաւոր կենտրոններից հեռու , մեն-մենակ ընկած է ջրերով , սա-  
րերով , ձորերով բաժանուած եւ աշխարհից կտրուած , եւ գնայ այն ժու-  
ղովրդի մէջ ապրի , որ խեղդուած փթում է անփոյթութեան եւ ագիտու-  
թեան խաւար սաղմերի մէջ . . . — «Ո՛ւր են ձեր վարժապետը , ուսում-  
նարանը , եկեղեցին , քահանան , տիրացուն , ժամասացութիւնը» ,  
դարձեալ դիմում եմ ՏԱՆԱՐ գիւղացիներին : Նրանց վայր՝ ի վերոյ պատ-  
մածներից իմանում եմ եւ ցաւում , որ Նախավկայի վանքը խղճուկ վի-  
ճակի մէջ է մնացել չնորհիւ ազան , ծոյլ , անարժան վանահայրերի ,  
որոնք կարողացել են վանքին պատկանող Դարաշամբի բնակիչներին  
խաբել ու , փոխանակ վանքի շահերը պաշտպանելու , պատճառ են ե-  
ղել վանքի , նաեւ գիւղի յետադիմութեան : Գիւղացիք մեծ անէծքներով  
ու նզովքներով էին յիշում թաղէոս Առիւծեան արեղային (Ա) եւ Վահան

(Ա) Արաքսի ափին , Ռուսաց հողի վրա , Դարաշամբի դիմաց , սա-  
րերի յետեւում Աստապատ գիւղի մօտ գանւսղ կարմիր վանքի վանա-  
հայրը : Դարաշամբիք կնունք , մկրտութիւն , հարսանիք կամ թէ մե-  
ռել ունեցած ժամանակ , երբ գիւղը եւ Նախավկայի վանքը թափուր է  
եղել քահանայից եւ վարդապետից , դիմել են Առիւծեանցին , որը անց-  
նելով Արաքսից՝ կատարելիս է եղել գիւղացոց խնդիրները : Շատ ան-  
գամ մեռելները մնացել են շարաթներով անթաղի եւ որովհետեւ երբեմն

վարդապետին (1), որոնք ինչ խաղեր ասես՝ որ չեն կատարել «կղզիացած» նախավկայի վանքում, խուլ ձորի մէջ եւ Դարաշամբում, որ աշխարհէ անյայտ խաւարի... 'ի վերջոյ ցանկութիւն յայանեցի այցելել Դարաշամբի եկեղեցուն: Փոքրիկ, նեղ եւ անդուռն քարէ ծակսից հազիւ կարողացայ մի քանի գիւղացիների հետ ներս մտնել այնտեղ: Ի՛նչ եկեղեցի. մի անզանգակատուն խարխուլ անկիւն, փայտէ, կիսաքանդ բեմ, այնտեղ մի քանի հնամաշ գզգզուած աւետարաններ, սաղմոսներ՝ թռզի, ցեցի մէջ կորած, մի կողմը ոչխարի հօտը նսաած որոճալիս, միւս կողմը պծած անասունների կերակուրը — դարմանայարդ. ծղնոցներ... մի խօսքով դժոխք կարծեցի, դուրս եկայ իսկոյն եւ խելագարութիւնից չը գիտէի ինչ անել: — «Տարէ՛ք ինձ նախավկայի վանքը», — համբերութիւնից դուրս գալով խնդրեցի կանգնած գիւղացիներին: Ծեր Մանուկի հետ երկու բարձրահասակ գիւղացի ինձ առաջնորդեցին դէպի վանքը...

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍԵԱՆՑ

### ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ԵՒ ԱՄԱՆՈՎ ԹԱՆ

Կարնոյ լեռնադաշտին մէջ երկու ուղեւորք ճամբորդելով՝ կը հասնին գեղացւոյ մը արան. այս վերջինս՝ ի նշան հիւրասիրութեան ամառնով թան կը դնէ առջեւին: Եւ որովհետեւ միակ մէկ դգալ պատրաստ ունէր, վէճ կը ծագի թէ ո՛վ պիտի սկսի նախ ճաշակել այն թանէն: Իսկոյն միաձայն հաւանութեամբ կ'որոշեն որ՝ ով որ կարենայ ամի յամոյ ոտանաւորով մը նոյն դաշտին վրայ հղած գիւղերէն գոնէ տասներկուքն յիշել, պիտի գործածէ միակ դգալն եւ թանէն վայելէ: Յանկարծ իրենց մէջէն ամենէն չարածճին հետեւեալ յանգաւոր տղերն հիւսեց:

Ահա՛ դիմացդ կաղտառիճ,  
 Կէզ եւ Դըմէիկ, Սընկառիճ,  
 Էրչիկ, Փըրչիկ, Էմբէճիկ,  
 Ճինիս, Բըրդոնք, Դէվըրդճիկ,  
 Նաեւ Աղուէր, Աղաւեր.  
 Պարո՛ն դըգալն ասդին բե՛ր:

Չայս ըսելով թանն ամբողջովին լափեց լմնցուց:

Յ. Վ. Մ.

Առիւծեանցը առարկել է. «Ես չեմ գալ, փող քիչ էք տալիս, ժամ ասելիս ձեր սիրուն կանայք չեն դալիս, այլ միայն տղամարդիկ...»

(1) Սա գործել է յայանի ղեղձումներ նախավկայի վանքում, որտեղից մի անգամ կաթողիկոսի հրահանգով կանչուեցաւ Էջմիածին քննութեան համար: